ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վիկտորյա Քեշիշյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Թաիլանդի Թագավորություն, Բագկակ 2024 թվականի մարտի 18-ից մինչև մարտի 21-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) Էներգետիկ փոխկապակցվածության 13-րդ և ժամանակակից էներգետիկ ծառայությունների համընդհանուր հասանելիության, վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և վառելիքի առավել մաքուր օգտագործման վերաբերյալ փորձագետների աշխատանքային խմբի 10-րդ հանդիպումներին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Միջոցառման շրջանակներում քննարկվել են Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում էներգետիկ ենթակառուցվածքների միացման հնարավորությունները և ուղղությամբ կատարված աշխատանքները:
   Մասնավորապես անդրադարձ է կատարվել էներգետիկ ենթակառուցվածքների միացման սխեմաներին, թվայնացման դերին և ինովացիոն տեխնոլոգիաներին, էներգահամակարգերի համատեղ աշխատանքին, պահանջարկի կանխատեսումներին, վերականգնվող էներգետիկ աղբյուրների ինտեգրմանը: Ներկայացվել են UNESCAP տարածաշրջանային ճանապարհային քարտեզով նախանշված աշխատանքների ընթացքը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Միջոցառմանը Վ. Քեշիշյանը ներկայացրել է զեկույց Հայաստանի էներգետիկ բնագավառի զարգացումների, կլիմայի փոփոխության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ձեռք բերված հաջողությունների, տարածաշրջանային համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող քայլերի վերաբերյալ:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փորձագիտական աշխատանքային խմբի անդամները ներկայացրեցին իրենց երկրներում կատարվող աշխատանքները, իրականացվեց փորձի փոխանակում: Ներկայացվեց նաև ընդհանուր ուսումնասիրություն՝ նշելով մարտահրավերները, դրանք հաղթահարելու հնարավոր տարբերակները և ուղղությամբ իրականացվելիք քայլերը:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա անելիքների, համագործակցության ձևաչափի, աշխատանքային հանդիպումների կազմակերպման անհրաժեշտության և իրականացման ֆորմատի վերաբերյալ:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի
վարչության ՎԷ բաժնի պետ Վ. Քեշիշյան